Ընթացիկ իրավիճակը և խնդիրներ
Դիզելային վառելիքի պահանջարկը բավարարելու և 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով մինչ 5,000,000 լիտր դիզելային վառելիքի ձեռքբերման հարցում աջակցելու նպատակով և ՀՀ կառավարության 29.12.2016 թ. N 1313-Ն որոշման N1 հավելվածի 26-րդ կետի պահանջով ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2017 թվականի ապրիլի 12-ի N 102-Ա հրամանով հաստատվել է պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռք բերման ծրագիրը: Ծրագրի իրականացումն ապահովելու համար նվազագույն շահավետ գնի որոշման նպատակով իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասին համապատասխան գնման գործընթաց: 2017 թվականի ապրիլի 14-ին Armeps համակարգի միջոցով հայտարարվել է շրջանակային համաձայնագրով գնման ընթացակարգ /ծածկագր՝ ՀՀ ԳՆ-ՇՀԱՊԶԲ-15/1-2/: Նշված գնման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկ են ներկայացրել <<Ֆլեշ>> ՍՊԸ-ն և <<Մաքսիուր>> ՍՊԸ-ն: 1 լիտրի դիմաց <<Ֆլեշ>> ՍՊԸ-ն առաջարկել է 320 ՀՀ դրամ, իսկ <<Մաքսիուր>> ՍՊԸ-ն 316.9 ՀՀ դրամ: Այնուհետև վերոնշյալ ծրագիրն իրականացնելու համար՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կազմակերպել է բանակցություններ վերոնշյալ 2 կազմակերպությունների հետ՝ դիզելային վառելիքի մատակարարման նվազագույն շահավետ գին որոշելու համար, որի արդյունքում <<Ֆլեշ>> ՍՊԸ-ն առաջարկել է 314 ՀՀ դրամ, իսկ <<Մաքսիուր>> ՍՊԸ-ն 314.3 ՀՀ դրամ: Միաժամանակ տեղեկացվում է, որ <<Ֆլեշ>> ՍՊԸ-ն հրաժարվել է 1 լիտրը 314 դրամով մատակարարել դիզելային վառելիք՝ համաձայն 25.05.2017թ. N 05/069 գրության (կցվում է): Իսկ <<Մաքսիուր>> ՍՊԸ-ն պարտավորվել է 1 լիտրը 314.3 դրամով մատակարարել դիզելային վառելիք՝ համաձայն 26.05.2017թ. N Ել-03 գրության (կցվում է): Համայնքներում սուբսիդիայի չափը 1 լիտր համար կազմում է. տեղական մատակարարողի կողմից՝ մինչև 5,000,000 լիտր դիզելային վառելիքի համար 34.3 դրամ (314.3 դրամ – 34.3 դրամ)=280դրամ: